— Կը բժշկեմ, — պատասխանեց նա:

— Ինչպէ՞ս կարող ես բժշկել, — հարցրի ես զարմանալով:

— Կարող եմ, — դարձեալ պատասխանեց նա վճռական կերպով: — Տեսնո՞ւմ ես այն երկու մեծ արկղները, որ տանում է տէր Մեսրոպի ծառան, նրանց մէջ ամփոփուած են իմ դեղորայքը եւ բժշկական գործիքները, որ շատ անգամ ինձ հետ ման եմ ածում:

Ես յետոյ, շատ յետոյ իմացայ, որ Ասլանը ոչ թէ հասարակ բժիշկ էր, այլ մի հմուտ բժշկապետ: Նա այդ արհեստը ուսել էր Ամերիկայում, երբ Հնդկաստանից այնտեղ էր գնացել: Նա ուսել էր եւ շատ եւրոպական լեզուներ, եւ այնպէս էր սիրում արհեստը ու գիտութիւնը, որպէս հասարակաց բարօրութեան գործը: Այո՛, ես շատ յետոյ իմացայ, որ նա տէր Թոդիկի դպրոցից փախչելուց յետոյ իրան նոիրել էր ուսման եւ բարձր գիտութիւնների...

— Լաւ, քանի որ դու բժիշկ ես, այլեւս կասկածելու ի՞նչ ունես: Ես ինչո՞վ կարող եմ խանգարել քո դերը, — հարցրի ես:

— Ես այնտեղ պէտք է գաղեմ իմ հայութիւնը... — պատասխանեց նա վրդովուած ձայնով, կարծես, նրան խիստ ծանր էր արտասանել այս խօսքը:

Նոյն օրոայ երեկոյեան պահուն, երբ մութը պատել էր աշխարհը, մենք մտանք Վան քաղաքը:

Առաջին հատորի վերջը: